ՆՈՐ ԲԱԺԻՆՆԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դրվեց սովետահայ պատմագրության կողմից։ Անցած մոտ 50 տարիների ընթացքում մեր պատմաբանները հսկայական աշխատանք ծավալեցին Հայոց պատմության գիտական լուսաբանման ուղղությամբ։

Սակայն, պետք է նշել, որ առ այսօր հայ պատմագրության պրոբլեմների գիտական մշակումը համարյա անտեսված է, մինչդեռ սովետահայ պատմական գիտությունը վաղուց հասել է զարգացման այնպիսի աստիճանի, որ ի վիճակի է ձեռնամուխ լինելու հայ ժողովրդի պատմական գիտության ուսումնասիրմանը, պատմա-քննական վերլուծության ենթարկելու միջնադարյան հայ պատմիչների և կղերա-ֆեոդալական ու բուրժուական պատմագրության պատմագիտական ժառանգությունը, սովետահայ պատմաբանների ուսումնասիրությունները և գիտականորեն ընդհանրացնելու կատարվածը։

ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը հաշվի առնելով այդ հանգամանքը, վերջերս ԳԱ պատմության ինստիտուտում ստեղծեց պատմագրության բաժին։

Նորաստեղծ բաժնի առաջնահերթ խնդիրն է՝

1. Հրատարակության պատրաստել վերջին տարիներին ինստիտուտի առանձին աշխատակիցների կողմից գրված «Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ» խորագիրը կրող ակնարկների ժողովածուն- 50—60 մամուլի սահմաններում։

2. Առաջիկա 3—4 տարիների ընթացքում բաժնի և ինստիտուտի համապատասխան գիտական աշխատակիցների ուժերով ստեղծել աշխատություն՝ նվիրված հայ պատմական գիտության զարգացմանը, ինչպես նաև առանձին կարևոր պրոբլեմների պատմության պատմագրությանը նվիրված մենագրություններ։

3. Մշակել պատմության մեթոդական ու մեթոդոլոգիական առանձին հարցեր։

4. Ասպիրանտուրայի միջոցով պատրաստել համապատասխան կադրեր։

5. Գիտական սերտ կապեր ստեղծել ինստիտուտի բաժինների և համապատասխան ինստիտուտների ու ամբիոնների հետ, համագործակցել նրանց հետ, պատրաստի գիտական աշխատությունները, հոդվածները, զեկուցումները համատեղ քննարկել ինստիտուտի համապատասխան բաժինների հետ՝ մասնակից դարձնելով դրսի մասնագետներին։

Բաժնի աշխատակիցների առաջիկա 2—3 տարիների թեմատիկ պլաններում նախատեսված են հետևյալ թեմաները՝ «Վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանների պատմագրությունը», «Կիլիկյան հայկական պետության պատմագրությունը», «Հայ հեղափոխական շարժումների պատմության պատմագրությունը», «XVIII դարի հայ աղատագրական շարժումների պատմության լուսաբանումը մինչհեղափոխական պատմագրության մեջ», «Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմության լուսաբանումը սփյուռքահայ պատմագրության մեջ 1920—1940 թթ.»։

Բաժնի վարիչ է նշանակված պատմական գիտությունների դոկտոր Լ. Բաբայանը։

*

ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը, նկատի ունենալով մեր ժողովրդի բազմադարյան հարուստ տնտեսագիտական ժառանգության ուսումնասիրության կարևորությունը և այդ բնագավառում աշխատանքների կենտրոնացման անհրաժեշտությունը, ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի կազմում 1967 թ. վերջում ստեղծեց տնտեսական պատմության և տնտեսագիտական մտքի պատմության բաժին, *որն արդեն իր կազմում ունի երեք գիտությունների թեկնածու, երկու ավագ տնտեսագետ և երկու տնտեսագետ։*

Բաժնի գիտահետազոտական աշխատանքները տարվում են երկու պրոբլեմի շուրջը.

1. Մեր երկրի տնտեսական զարգացման պատմություն։ Այդ պրոբլեմի գծով մշակվել և այժմ ավարտվում է «Հայաստանի տնտեսական զարգացումը նախնադարյան համայնական կարգերում և վաղ ստրկատիրության շրջանում» թեման (20 մամուլ ծավալով)։ Մշակվում են նաև «Սովե-

տական Հայաստանի ինդուստրացման պատմությունը» և «Գունավոր մետաղագործության զարգացումը Հայաստանում» թեմաները, որոնք կավարտվեն 1970 թ.։

2. Հայ տնտեսագիտական մտքի պատմություն։ Տվյալ պրոբլեմի գծով մշակվել և արդեն ավարտվել է «Հայ սոցիալ-տնտեսագիտական մտքի զարգացումը IX—XIV դարերում» (20 մամուլ ծավալով)։ «Մարքսիստական քաղաքատնտեսության հարցերը Ստեփան Շահումյանի աշխատություններում» (8 մամուլ ծավալով) թեմաները։ Մշակվում են՝ «Տնտեսագիտական մտքի զարգացումը վաղ միջնադարում», «Տնտեսագիտական մտքի զարգացումը XV—XVIII դարերում» և «Սովետահայ տնտեսագիտական մտքի զարգացումը» թեմաները, որոնցից առաջին երկուսը ավարտվելու են 1970, իսկ վերջինը՝ 1972 թ.։

Նոր ստեղծած բաժինը ընդգրկել է վերոհիշյալ երկու պրոբլեմի թեմաների մի փոքր մասը միայն։ Հայաստանի տնտեսական զարգացման և տնտեսագիտական մտքի մանրազնին գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ է այդ գործում ընդգրկել հանրապետության բոլոր տնտեսագետ-պատմաբաններին։

Բաժնի վարիչ է նշանակված տնտեսական գիտությունների թեկնածու Ն. Ռ. Թովմասյանը։